

## ԿԱՐՏԻՆԱԼ ՈՒՃԸՐ ՄԱՅՈՆԻ ԵՆԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ Կ'ԱՅՑԵԼԷ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Գոհունակութեամբ կը հաղորդենք, թէ Սրբազան Հայրը Միջ-Եկեղեցական յարաբերութիւններու ծիրէն ներս եւս սերտ յարաբերութիւն կը մշակէ Քոյր Եկեղեցիներու եւ Լոս Անճելըսի Հոգեւոր Պետերու Խորհուրդին հետ:

Յունիս 24ին Լոս Անճելըսի Կաթոլիկ Եկեղեցւոյ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Ռաճըր Կարտինալ Մահոնի ներկայացուցիչը Միջ-Եկեղեցական յարաբերութիւններու, Հայր Ալեքսի Սմիթ այցելեց Առաջնորդարան եւ հանդիպում ունեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր հետ, որուն ներկայ գտնուեցաւ նաեւ Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան:

Հայր Ալեքսի Կարտինալին եղբայրական ողջոյնները փոխանցեց Առաջնորդ Սրբազան Հօր եւ ապա խորհրդակցութիւն տեղի ունեցաւ այս տարուան ընթացքին Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ Միջ-Եկեղեցական արարողութիւն մը ունեալու կապակցութեամբ: Հայր Ալեքսի իր շնորհաւորութիւնները յայտնեց Սրբազան Հօր՝ Մայր Եկեղեցւոյ կառուցման աշխատանքներու աւարտման առթիւ եւ յոյս յայտնեց, թէ Միջ-Եկեղեցական պաշտամունքը հոգեկան հրճուանք պիտի պատճառէր բոլոր մասնակցողներուն: